27.04.2022թ.
349-88

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել 2019-2020 թթ. ընթացքում մամուլի խոսնակին և քաղաքապետարանի լրատվության վարչության պետին (առանց անունները նշելու) վճարված պարգևավճարների չափը՝ առանձնացված ըստ տարիների:

Անձնական տվյալների պաշտպանության գործակալության որոշումների և խորհրդատվությունների համաձայն՝ անձնական տվյալները չեն նույնանում գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ, իսկ անձնական տվյալը տվյալի տեսակի անվանումն է, այլ ոչ թե ռեժիմը: Անձնական տվյալն ինքնին գաղտնիք չէ, անձնական տվյալներին երրորդ անձանց մատչելիությունը կամ այդ տվյալների հանրամատչելիությունը սահմանափակելու անհրաժեշտության դեպքում անձնական տվյալները պետք է դասակարգվեն որպես որևէ գաղտնիք: Ուստի, որևէ տեղեկության անձնական տվյալ լինելն ինքնին դեռևս այդ տեղեկությունը տրամադրելու արգելք չէ: Միաժամանակ, ՏԱ մասին օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ հայցվող տեղեկությունը որպես որևէ գաղտնիք մերժելիս անհրաժեշտ է նշել այն օրենքի համապատասխան նորմը, որի համաձայն նշված տեղեկությունը համարվում է այս կամ այն գաղտնիք:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am